ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 15/02

ք. Արտաշատ «30» «հունվարի» 2015թ

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Արարատի մարզպետարանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրատու, մի կողմից և <<Պ. Սևակի անվան տուն-թանգարանը՝ ի դեմս Ավետիք Գրիգորյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրառու, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով, «ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելվածի N 1-ի աղյուսակ N 1-ի ՀՀ Արարատի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» կնքեցին սույն պայմանագիրը:

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով և «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան հատկացումների շրջանակներում Նվիրատուն Նվիրառուին է հատկացնում 7529.7 հազ.դրամ/ յոթ միլիոն հինգ հարյուր քսանինը հազար յոթ հարյուր ՀՀ դրամ/ պահպանման ծախսերի համար:

2.Սուբսիդիան տրամադրելու և ծախսելու կարգը

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

2.2 Նվիրառուն պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Նվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:

2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Նվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Նվիրառուի գանձապետական հաշվին, իսկ տեղական գանձապետական բաժանմունքը Նվիրառուին գումարները հատկացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Այլ դրույթներ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու	Նվիրառու
Արարատի մարզպետարան	«Պ. Սևակի անվան տուն-թանգարան» ՊՈԱԿ
Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	գ. Զանգակատուն
Ֆինանսների նախարարության ԳՎ	<<Արդշինինվեստ բանկ>> Վեդու մ/ճ
h/h 900411068027	hh 247760165628
hhվh 04204503	hhվh 04105615
Ա. Մարգարյան	Ա. Գրիգորյան
/Աշխատանքների ղեկավար/	